



**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ինչպե՞ս անձնական տվյալներն
ավելի պաշտպանված դարձնել
Google-ում և YouTube-ում

Աշխարհի ամենամեծ և հայտնի ինտերնետային ընկերությունը՝ Google-ն իրականացնում է օգտատերերի տվյալների հավաքագրում՝ այդ տվյալներն օգտագործելով գովազդների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Ընկերությունն, օրինակ, հետևում է, թե ինչ կայքեր են այցելել մարդիկ:


2016 թվականի հոկտեմբերին Google ընկերությունը որոշակի փոփոխություններ կատարեց տվյալներ մշակելու քաղաքականության մեջ, սակայն, այդ մասին առանձնապես չի բարձրաձայնվում: Այժմ ընկերությունը կարող է օգտատիրոջ մասին ամբողջական տեղեկատվություն ստանալ՝ ոչ միայն հիմնվելով այն բանի վրա, թե ինչ տեսանյութեր է դիտել մարդը, ինչ էլեկտրոնային նամակներ է գրել, ինչ է փնտրել համացանցում, այլ նաև՝ ըստ կայքերի այցելությունների պատմության: Եւ այս ամենը կցվում է օգտատիրոջ անվանը:

Այս ուղեցույցը գործնական քայլերի միջոցով կօգնի Ձեզ «արգելել» Google-ին հավաքել Ձեր մասին տեղեկություններ ամբողջությամբ կամ մասնակի:


Արգելեք հավաքագրել տվյալներ այն մասին, թե ինչ կայքեր եք այցելել


[Այս էջում](#) կարող եք անջատել այն գործառույթները, որոնք Google-ին հնարավորություն են տալիս տվյալներ հավաքել Ձեր մասին:

Անջատիչի միջոցով կարող եք դադարեցնել համացանցում կամ հավելվածների միջոցով կատարած ձեր գործողությունների հավաքագրումը:



Այցելությունների պատմությունը





Location History (paused) 

Creates a private map of where you go with your signed-in devices in order to provide improved map searches, commute routes, and more. [Learn more](#)

[MANAGE ACTIVITY](#)

Android սարքերով կատարած գործողությունները





Device Information 

Store your contacts, calendars, apps, and other device data to improve your experience across Google. [Learn more](#)

[MANAGE ACTIVITY](#)

Ձայնային հրամանները կամ որոնումները




Voice & Audio Activity 


Help recognize your voice and improve speech recognition by storing your voice and audio inputs to your account (for example, when you say "Ok Google" to do a voice search). [Learn more](#)

[MANAGE ACTIVITY](#)


Այստեղ կարող եք անջատել այն գործառույթը, որը գրանցում է YouTube-ում դիտած կամ որոնած տեսանյութերի պատմությունը:




Ձեր մասին արդեն իսկ հավաքագրված տեղեկատվությունը կարող եք ջնջել [այս էջում](#)՝ Google-ի ձեր օգտահաշիվ (account) մուտք գործելուց հետո: Եթե չունեք հաշիվ Google-ում, բացեք այն [այս էջում](#)՝ հետևելով համապատասխան հրահանգներին:



Ընդ որում, ինքներդ կարող եք ընտրել, թե որ ժամանակահատվածի ու ծառայության համար եք ուզում ջնջել տվյալները.



YouTube-ում Ձեր դիտած ու որոնած տեսանյութերի պատմությունը կարող եք ջնջել [այս էջում](#)



Արգելեք գովազդային ծառայություններին հետևել ձեր նախապատվություններին

[Այստեղ](#) կարելի է անջատել կամ միացնել գովազդի ցուցադրումը՝ ըստ ձեր հետաքրքրությունների: Ձեր հետաքրքրություններին համապատասխանեցնելու համար Google-ը կազմում է օգտատիրոջ պատկերը. «Ձեր թեմաները» («Ваши темы», «Your Topics») և «Իմ էջը» («Мой профиль», «Your Profile») կետերում կարելի է տեսնել, թե ընկերությունն ինչ տվյալներ է հավաքել ձեր սեռի, տարիքի ու հետաքրքրությունների մասին: Այս կետերը կարելի է խմբագրել, բայց ավելի հուսալի է անջատել «Գովազդի անհատականացում» ֆունկցիան: Դրանից հետո Google-ը կդադարի հետևել ձեր հետաքրքրություններին, իսկ դուք այլևս չեք տեսնի ձեր հետաքրքրություններին համապատասխանող գովազդ:

Ads Personalization



Make the ads you see more useful to you when using:

- Google services (ex: Search, YouTube)
 - 2+ million non-Google websites and apps that partner with Google to show ads
- Also use Google Account activity and information to personalize ads on these websites and apps and store that data in your Google Account

What are the 2+ million websites and apps that partner with Google to show ads?

What personal information does Google give to partners?

Your topics

- | | | |
|--|--|--|
| <input checked="" type="checkbox"/> Blues | <input checked="" type="checkbox"/> Books & Literature | <input checked="" type="checkbox"/> Business & Industrial |
| <input checked="" type="checkbox"/> Cats | <input checked="" type="checkbox"/> Celebrities & Entertainment News | <input checked="" type="checkbox"/> Classical Music |
| <input checked="" type="checkbox"/> Comics & Animation | <input checked="" type="checkbox"/> Computers & Electronics | <input checked="" type="checkbox"/> Dance & Electronic Music |
| <input checked="" type="checkbox"/> Fashion & Style | <input checked="" type="checkbox"/> Finance | <input checked="" type="checkbox"/> Games |
| <input checked="" type="checkbox"/> Jazz | <input checked="" type="checkbox"/> Mobile & Wireless | <input checked="" type="checkbox"/> Movies |
| <input checked="" type="checkbox"/> Online Communities | <input checked="" type="checkbox"/> Performing Arts | <input checked="" type="checkbox"/> Politics |
| <input checked="" type="checkbox"/> Pop Music | <input checked="" type="checkbox"/> Rock Music | <input checked="" type="checkbox"/> Shopping |
| <input checked="" type="checkbox"/> TV Comedies | <input checked="" type="checkbox"/> TV Documentary & Nonfiction | <input checked="" type="checkbox"/> TV Dramas |

+ NEW TOPIC

VIEW 2 MORE INTERESTS

WHERE DID THESE COME FROM?

Your profile

This information comes from your Google Account. If you edit it, your changes will apply across your Google Account. Depending on the settings you've chosen, this information might be used to show you ads.

Արգելեք բրաուզերներին պահել ձեր գործողությունների պատմությունը և դա օգտագործել թիրախավորված գովազդի համար

DoubleClick-ը գովազդային ցանց է, որը հավաքում է ձեր ինտերնետային այցելությունների պատմությունը ու հետո ցուցադրում թիրախավորված գովազդներ:

Ովքեր չեն ուզում, որ DoubleClick գովազդային ցանցը հետևի իրենց, նրանց համար Google-ը թողարկել է [հավելված բրաուզերի համար](#):

Այն արգելում է DoubleClick-ին ձեր համակարգչում պահել քուկիներ՝ տեքստային ֆայլեր, որոնցում գրանցվում է ինֆորմացիան այն մասին, թե ինչ կայքեր եք այցելել ու ինչ գովազդ եք դիտել:

Ads Settings

Save your opt-out preference permanently

With this browser plugin you can permanently opt out of the DoubleClick cookie, which is an advertising cookie that Google uses. The plugin lets you keep your opt-out status for this browser even when you clear all cookies.

[Download the advertising cookie opt-out plugin](#) Requires Google Chrome. Also available for Internet Explorer & Firefox.

Don't want to opt out?

Visit [Ads Settings](#) to edit the preferences that are associated with this cookie.


Open source

The Google advertising cookie opt-out plugin is available as open source on our [project code site](#).


Վարդավորեք հեռախոսը

iOS-ով ու Android-ով աշխատող հեռախոսներում նույնպես կա ֆունկցիա, որը թույլ է տալիս գովազդային ցանցերին հետևել Ձեզ: iPhone-ներում պետք է մտնել «Վարդավորումներ» («Настройки, Settings») > «Գաղտնիություն» (Конфиденциальность, Privacy) > «Գովազդ» ու ակտիվացնել «Սահմանափակել գովազդներին հետևել» (Ограничить трекинг рекламы, Limit Ad Tracking) կետը: Android-ում՝ «Վարդավորումներ» (Настройки, Settings) > «Google» > «Գովազդ» ու ակտիվացնել «Անջատել գովազդի անհատականացումը» (Отключить персонализацию рекламы, Disable personalized ads) կետը:

iPhone-ի համար



Android-ի համար




Արգելեք Google+-ին օգտագործել ձեր անունը գովազդներում

Այս կարգավորումը կապված է Google+ սոցիալական ցանցի հետ: Նախկինում Google-ը կարող էր գովազդներում Ձեր ընկերների ցույց տալ Ձեր նկարն ու անունը, եթե մինչ այդ դուք «հավանել էք» այդ ծառայությունը կամ ապրանքը: Հայտնի չէ՝ կա այդ ֆունկցիան այժմ, թե ոչ, բայց ամեն դեպքում այն կարող էք անջատել [այստեղ](#):

Ուսումնասիրեք, թե էլ ինչ կարելի է արգելել Google-ին

Հաջորդիվ ներկայացվող կարգավորումները գովազդի հետ ուղիղ կապ չունեն: Բայց Google-ը մեծ թվով տվյալներ է հավաքում այն մասին, թե ինչ էք դուք անում՝ ներառյալ ձեր ձայնային հրամանների աուդիոները (Okay Google ձայնային որոնումները):

[Այստեղ](#) կարող եք տեսնել, թե ընկերությունն ինչ գիտի ձեր մասին, իսկ անջատել, օրինակ, YouTube-ում դիտած տեսանյութերի կամ ձայնային որոնման պատմությունը կարող էք [այստեղ](#): Բացի դրանից, Google Maps-ը [պահպանում է ձեր այցելությունների պատմությունը](#): Էջի ներքևում կտեսնեք «Անջատել պատմությունը» մեծ կոճակը:



YouTube-ը նույնպես ունի իր օգտագործման պայմաններն ու քաղաքականությունը: Անցանկալի տեսանյութերը այս պորտալից հեռացնելու համար պետք է այդ մասին հայտնեք հենց YouTube-ին




Կարող եք հայտնել այնպիսի տեսանյութերի մասին, որոնք խախտել են ձեր հեղինակային իրավունքները (Օրինակ՝ ձեր հեղինակած տեսանյութը այլ օգտատեր հրապարակել է իր ալիքում), կամ տեսանյութեր, որոնցում առկա է պռնոգրաֆիա, բռնություն, սեռական ակտ, տեսանյութեր, որոնք վտանգ են ներկայացնում երեխաների համար, պարունակում են ստեղծություն, արյունոտ կադրեր, քարոզչություն են անում ընդդեմ ազգի, էթնիկական ծագման, կրոնական համոզմունքների:

Եթե ցանկանում եք հայտնել տեսանյութի մասին, որը չպետք է լինի YouTube-ում (այդ թվում ձեր մասնակցությամբ կամ ձեր մասին տեսանյութերը), արեք հետևյալը.

Նախ պետք է գրանցվել սեփական էջն ունենալու համար, այլապես հնարավոր չէ բողոքել: Գրանցվելու համար պետք է ստեղծել Google-ի օգտահաշիվ [այս էջում](#):

Այնուհետև ստեղծված էլ. փոստի անունով ու գաղտնաբառով անհրաժեշտ է մուտք գործել YouTube, բացել տեսանյութը, որի մասին ուզում եք բողոքել ու անել հետևյալը.

Տեսանյութի ներքևի հատվածում սեղմել՝ «Ավելին» (More), այնուհետև՝ «Հայտնել» (Report):



Այնուհետև կբացվի մեկ այլ դաշտ, որտեղ պետք է ընտրել, թե հատկապես ինչ պատճառով տվյալ տեսանյութը չպետք է լինի YouTube-ում

Report this video

What is the issue?*

- Sexual content ?
- Violent or repulsive content ?
- Hateful or abusive content ?
- Harmful dangerous acts ?
- Child abuse ?
- Spam or misleading ?
- Infringes my rights ?
- Captions issue

Սեքսուալ բովանդակություն

Բռնություն կամ զգվելի բովանդակություն

Ատելի կամ վիրավորական բովանդակություն

Վնասակար ու վտանգավոր գործողություններ

Երեխաների շահագործում

Սպամ է կամ խաբեություն

Խախտում է իմ իրավունքները

YouTube-ի օգտագործման պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

Google-ի գաղտնիության քաղաքականությանը կարելի է ծանոթանալ [այստեղ](#):